փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[30] Այդպես էլ պետք է լինի:

Ես բերում եմ վկայություն քահանայության զորության մասին, որը տրված է Եկեղեցուն մեզ պաշտպանելու և առաջնորդելու համար: Եվ քանի որ մենք ունենք դա, մենք չենք վախենում ապագայից: Վախը հավատքի հակառակն է: Մենք առաջ ենք շարժվում, վստահ լինելով, որ Տերը հետևում է մեզ, հատկապես ընտանիքում: Սրա մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, "Correlation Brings Blessings," *Relief Society Magazine,* Apr. 1967, 247.
2. Տես Դատավորաց Է.4–8:
3. Մորմոն 8.30; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.26; Զոզեֆ Սմիթ – Մատթեոս Ա.23, 28:
4. Վարդապետություն և Ուխտեր 45.26; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 88.91:
5. Վարդապետություն և Ուխտեր 52.14:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 10.22–23:
7. Տես Հայտնություն ԺԲ.7–9; Վարդապետություն և Ուխտեր 29.36–37; 76.25–26:
8. Դատավորաց Է.21:
9. Վարդապետություն և Ուխտեր 112.30:
10. Զոզեֆ Սմիթ – Պատմություն 1.17:
11. Տես Զոզեֆ Սմիթ – Պատմություն 1.33–34, 59:
12. Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ, Վարդապետություն և Ուխտեր 135.3:
13. Տես Զոզեֆ Սմիթ – Պատմություն 1.68–69:
14. Վարդապետություն և Ուխտեր 13.1:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 27:12–13:
16. Վարդապետություն և Ուխտեր 107.3:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.2-4, տես նաև Եբրայեցիս Է.1–4; Ալմա 13.15:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.58:
19. Տես 1 Նեփի 14.14:
20. 1 Նեփի 14.12:
21. Joseph Fielding Smith, in Conference Report, Oct. 1968, 123.
22. Տես Boyd K. Packer, "What Every Elder Should Know—and Every Sister as Well: A Primer on Principles of Priesthood Government," *Tambuli,* Nov. 1994, 15–24:
23. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 141; Joseph Smith Translation, Genesis 14:28–31, in Bible appendix:
24. Harold B. Lee, "Preparing Our Youth," *Ensign,* Mar. 1971, 3; emphasis added.
25. Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 287.
26. Վարդապետություն և Ուխտեր 1.19:
27. 1 Նեփի 14.14:
28. Վարդապետություն և Ուխտեր 82.10:
29. Եփեսացիս Բ.20–22:
30. Մովսես 1.39:

Ջուլի Բ. Բեք
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

«Եվ աղախինների վրա էլ պիտի թափեմ այն օրերը իմ հոգին»

Մենք գիտենք, որ հաջողակ ենք, եթե ապրում ենք այնպես, որ արժանանում և ստանում ենք Սուրբ Հոգին և խնամում, ինչպես հետևել Նրան:

Անցյալ տարի տարբեր երկրներում ես հանդիպել եմ հազարավոր Վերջին Օրերի Սուրբ կանանց: Դժվարությունների ցուցակը, որոնց այդ քույրերը դիմակայում են, երկար է և սթափեցնող: Այդ թվում են ընտանեկան դժվարությունները, տնտեսական փորձությունները, աղետները, վթարներն ու հիվանդությունները: Անհանգստությունը շատ է, իսկ խաղաղությունն ու ուրախությունը՝ ոչ բավարար: Չնայած հանրահայտ լրատվամիջոցների ուղերձները հակառակն են ասում, ոչ ոք այնքան հարուստ, գեղեցիկ կամ խելացի չէ՝ մահկանացու կյանքի դժվարություններից խույս տալու համար:

Քույրերի տված հարցերը լուրջ էին և խորաթափանց: Դրանք արտահայտում էին անհույս ապագա, անկատար ակնկալիքների ցավ, որոշ անորոշություն և նվաստացած արժանապատվություն: Դրանք նաև արտացոլում էին ճիշտ գործելու մեծ ցանկություն:

Իմ մեջ անհաղթահարելի վկայություն է աճել Աստծո դուստրերի արժեքի մասին: Այնքան շատ բան է կախված նրանցից: Քույրերին այցելելիս զգացել եմ, որ երբեք հավատքի և անձնական արդարակեցության ավելի մեծ կարիք չի եղել: Երբեք ամուր ընտանիքների և տների ավելի մեծ կարիք չի եղել: Երբեք կարիքավորներին օգնելը բավարար չի եղել: Ինչպե՞ս կարելի է ավելացնել հավատքը, ամրապնդել ընտանիքը և օգնություն տրամադրել:[1] Ինչպե՞ս կարող է կինը մեր օրերում իր անձնական հարցերի պատասխանները գտնել և ամուր ու անսասան կանգնել հզոր դիմադրության և դժվարության դեմ:

Անձնական հայտնություն

Լավ կինը գիտի, որ ինքը բավականաչափ եռանդ, ժամանակ կամ հնարավորություն չունի բոլոր մարդկանց համար հոգալու և անելու իր սրտից բխող ամեն արժանի բան: Շատ կանանց կյանքը հանգիստ չի ընթանում և ամեն օր, կարծես, պահանջվում են միլիոնավոր գործեր, որոնց մեծ մասը կարևոր է: Լավ կինը պետք է մշտապես դիմակայի հրապուրիչ և խաբուսիկ ուղերձներին, որոնք գալիս են

տարբեր աղբյուրներից և ասում, որ ինքն իրավունք ունի ավելի շատ ժամանակ անցկացնել իր պատասխանատվություններից հեռու, և որ ինքն արժանի է ավելի հեշտ կյանքի և անկախության: Սակայն անձնական հայտնությամբ նա կարող է ճիշտ առաջնահերթություններ դնել և այս կյանքում վստահորեն առաջ գնալ:

Անձնական հայտնության համար որակվելու, այն ստանալու և ըստ դրա գործելու ունակությունը այն եզակի ամենակարևոր ունակությունն է, որ կարող է ձեռք բերվել այս կյանքում: Տիրոջ հոգուն արժանանալու համար պետք է փափագել հոգին և ունենալ որոշակի չափի արժանավորություն: Պատվիրանները պահելը, ապաշխարությունը և մկրտության ժամանակ կապած ուխտերի նորոգումը բերում է Տիրոջ հոգին միշտ մեզ հետ ունենալու օրհնությունը:[2] Տաճարային ուխտեր կապելն ու պահելը ևս հոգևոր ուժ և զորություն են ավելացնում կնոջ կյանքում: Դժվար հարցերի շատ պատասխաններ են ստացվում սուրբ գրություններն ընթերցելիս, քանի որ սուրբ գրությունները նպաստում են հայտնության:[3] Սուրբ գրություններում գտնվող ներըմբռնումը ժամանակի ընթացքում ավելանում է, այնպես որ կարևոր է ամեն օր որոշակի ժամանակ տրամադրել սուրբ գրություններին: Ամենօրյա աղոթքը ևս կարևոր է Տիրոջ հոգին մեզ հետ ունենալու համար:[4] Նրանք, ովքեր լրջորեն օգնություն են փնտրում աղոթքի և սուրբ գրությունները ուսումնասիրելու միջոցով, հաճախ թուղթ ու մատիտ են պահում իրենց մոտ, որպեսզի գրեն հարցերը և գրանցեն իրենց տպավորություններն ու մտքերը:

Հայտնությունը կարող է գալ ժամ առ ժամ և ժամանակ առ ժամանակ, երբ մենք ճիշտ ձևով ենք գործում: Երբ կանայք հոգ են տանում, ինչպես Քրիստոսն էր հոգ տանում, զորություն և խաղաղություն կարող է իջնել՝ առաջնորդելով այն ժամանակ, երբ օգնության կարիք կա: Օրինակ, մայրերը կարող են հոգու օգնությունը զգալ նույնիսկ, երբ հոգնած աղմկոտ երեխաները ուշադրություն են պահանջում, սակայն նրանք կարող են հեռու լինել հոգուց, եթե կորցնելով իրենց համբերությունը, բարկանան երեխաների վրա: Ճիշտ տեղում լինելը մեզ առաջնորդություն ստանալու հնարավորություն է տալիս: Դա պահանջում է գիտակից ջանքեր՝ նվազեցնելու համար ցրվածությունը, սակայն հոգու հայտնությունն ունենալով հնարավոր է հաղթահարել հակառակությունը և հավատքով շարունակել դժվար օրերին և հատկապես հիմնական խնդիրները լուծելիս: Անձնական հայտնությունը մեզ օգնում է հասկանալ, թե ինչ է պետք անել ամեն օր, որպեսզի ավելացնենք մեր հավատքը և անձնական արդարակեցությունը, ամրացնենք ընտանիքները և տները, և փնտրենք նրանց, ովքեր մեր օգնության կարիքն ունեն: Քանի որ անձնական հայտնությունը ուժի մշտապես թարմացող աղբյուր է, հնարավոր է, անգամ անհանգիստ ժամանակ օգնությամբ պատված լինելու զգացում ունենանք:

Մեզ ասել են, որ մեր հույսը դնենք հոգու վրա, որն առաջնորդում է մեզ «արդար գործել, խոնարհ քայլել, արդարությամբ դատել»:[5] Մեզ նաև ասել են, որ այդ հոգին կլուսավորի մեր միտքը, կլցնի մեր հոգին ուրախությամբ, և կօգնի իմանալ մեզ համար անհրաժեշտ ամեն ինչ:[6] Խոստացված անձնական հայտնությունը գալիս է, երբ մենք խնդրում ենք այն, պատրաստվում դրան և առաջ գնում հավատքով, վստահ լինելով, որ այն կհեղվի մեզ վրա:

Սփոփող Միություն—ուսուցում, ոգեշնչում և ամրապնդում

Տերն Իր իմաստությունն է տվել Սփոփող Միությանը՝ օգնելու Իր դուստրերին այս վերջին օրերին: Երբ Սփոփող Միությունը ոգեշնչված է գործում, այն բարձրացնում է կանանց անհանգիստ աշխարհից վեր և դնում այն ապրելակերպի մեջ, որը պատրաստում է նրանց հավերժական կյանքի օրհնություններին: Այս կազմակերպության առանցքային պատասխանատվությունն է՝ օգնել քույրերին ավելացնել հավատը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքը և տունը և գտնել ու օգնել կարիքավորներին: Սփոփող Միության շնորհիվ քույրերը կարող են ստանալ իրենց հարցերի պատասխանները և օրհնվել բոլոր քույրերի միասնական հոգևոր ուժով: Սփոփող Միությունը հաստատում է Աստծո դուստրերի ճշմարիտ և հավերժական բնույթը: Դա սուրբ վստահություն է, ուղեկցող լույս և հսկող համակարգ, որն

ուսուցանում և ոգեշնչում է կանանց լինելու ամուր ու անսասան: Բոլոր լավ կանայք մարմնավորում են դրա նշանաբանը, որն է՝ «Սերը երբեք չի վերջանում»:[7]

Երբ աղջիկը Սփոփող Միություն է գալիս կամ երբ կինը մկրտվում է Եկեղեցում, նա դառնում է քույրության մի մասը, որն ամրացնում է նրան հավերժական կյանքին պատրաստվելիս: Սփոփող Միություն մուտք գործելը նշան է, որ կնոջը կարող է վստահվել և հավատ ընծայվել, որ նա նշանակալից ավանդ կներդնի Եկեղեցում: Նա շարունակում է առաջադիմել որպես անհատ՝ առանց ակնհայտորեն գնահատանքի կամ գովասանքի արժանանալու:

Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահ Էլզա Ռ. Սնոուն ասել է քույրերին. «Մենք ցանկանում ենք լինել կանայք ամեն գործում, ոչ թե բառի աշխարհի հասկացողությամբ, այլ համապատասխան գործընկերներ Աստծո և Միակ Սրբի: Կազմակերպված լինելով, մենք կկարողանանք աջակցել միմյանց ոչ միայն լավ գործեր կատարելով, այլ զարգանալով, և եթե մի քանիսը կամ շատերը առաջ գան և օգնեն կատարելու այս մեծ աշխատանքը, նրանք Աստծո Արքայությունում պատվավոր պաշտոններ կզբաղեցնեն … Կանայք պետք է լինեն կանայք, և ոչ թե երեխաներ, որոնց պետք է ամեն ոոպե փայփայել և ուղղել: Ես գիտեմ, որ մենք ուզում ենք գնահատվել, սակայն, եթե չենք ստանում ողջ գնահատանքը, որին արժանի ենք, ի՞նչ կարևոր է: Մենք գիտենք, որ Տերը մեծ պատասխանատվություն է տվել մեզ, և ամեն ցանկություն կամ իղձ, որ Տերը դրել է մեր սրտերում արդարակեցության մեջ, կկատարվի, իսկ մեծագույն բարիքը, որ կարող ենք անել մեր և միմյանց համար, դա՝ զարգանալն ու հոկվելն է այն ամենում, ինչը բարի է և ազնվացնող, որպեսզի որակվենք այդ պատասխանատվությունների համար»:[8]



Գնահատել հաջողությունը

Լավ կանայք միշտ ցանկանում են իմանալ, թե արդյոք իրենք հաջողակ են: Աշխարհում, որտեղ հաջողության չափանիշները հաճախ աղավաղված են, կարևոր է գնահատանք և հաստատում փնտրել ճիշտ աղբյուրներից: *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկում տրված է՝ մենք լավ ենք գործում, երբ զարգացնում ենք Քրիստոսի հատկանիշները և ձգտում ենք լիովին հնազանդվել Նրա ավետարանին: Մենք ճիշտ ենք գործում, երբ ձգտում ենք բարելավել մեզ և մեր ուժերի չափով լավագույնը անել: Մենք լավ ենք գործում, երբ զարգացնում ենք մեր հավատքը, ավելացնում անձնական արդարակեցությունը, ամրապնդում ընտանիքը և տունը, գտնում և օգնում կարիքավորներին: Մենք գիտենք, որ հաջողակ ենք, եթե ապրում ենք այնպես, որ արժանանում և ստանում ենք Սուրբ Հոգին, և իմանում, ինչպես հետևել Նրան: «Երբ մեր ուժերի սահմանում անում ենք, ինչ կարող ենք, դեռևս հնարավոր է հիասթափության պահեր ապրենք, սակայն մենք չենք հիասթափվի ինքներս մեզանից: Կարող ենք համոզված լինել, որ Տերը գոհանում է, երբ մենք զգում ենք, թե ինչպես է Հոգին աշխատում մեր միջոցով»:[9] Խաղաղություն, ուրախություն և հույս կա նրանց համար, ովքեր ճիշտ ձևով են գնահատում հաջողությունը:

Հովելի գրքում հայտնությունն ասում է, որ վերջին օրերին Աստծո որդիներն ու դուստրերը կմարգարեանան և Տերը Իր Հոգին կթափի Իր ծառաների և Իր աղախինների վրա:[10] Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն արձագանքել է այդ մարգարեությանը, ասելով.

«Վերջին օրերին Եկեղեցու աննախադեպ աճը պայմանավորված կլինի նրանով, որ աշխարհի բազմաթիվ լավ կանայք (որոնց մեջ հաճախ կա ներքին հոգևոր զգացում) կգան Եկեղեցի: Դա տեղի կունենա այնպիսի չափերով, որ Եկեղեցու կանայք իրենց կյանքով արդարակեցություն և պարզություն կարտացոլեն, և դա այնքան վառ կարտահայտվի, որ Եկեղեցու կանայք առանձնահատուկ ձևով կտարբերվեն աշխարհի կանանցից …

Կլինի այնպես, որ վերջին օրերին Եկեղեցու օրինակելի կանայք վիթխարի ուժ կներկայացնեն, ինչ վերաբերում է Եկեղեցու թվական և հոգևոր աճին»:[11]

Ես իմ վկայությունն եմ բերում, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է: Տերը ապավինում է իր դուստրերին, որ նրանք կատարեն իրենց մասը, ամրապնդելով Սիոնի տները և կառուցելով Նրա արքայությունը երկրի վրա: Երբ նրանք փնտրեն անձնական հայտնություն և որակվեն դրան, Տերը դուրս կթափի Իր Հոգին Իր աղախինների վրա այս վերջին օրերին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Հակոբ 2.17, Սոսիա 4.26, Վարդապետություն և Ուխտեր 38.35, 44.6:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.77:
3. Տես 2 Նեփի 32.3:
4. Տես 3 Նեփի 19.24–33:
5. Վարդապետություն և Ուխտեր 11.12:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 11.13:
7. Ա Կորնթացիս ԺԳ.8:
8. Eliza R. Snow, address to Lehi Ward Relief Society, Oct. 27, 1869, Lehi Ward, Alpine (Utah) Stake, in Relief Society, Minute Book, 1868–79, Church History Library, Salt Lake City, 26–27.
9. Տես *Քարոզիր Իմ Ավետարանը* (2004), 10–11:
10. Տես Հովել Բ. 28–29:
11. Spencer W. Kimball, "The Role of Righteous Women," *Ensign*, Nov. 1979, 103–4.